270 Մեր ճամփան է միշտ փշոտ ու քարքարոտ,

1. Մեր ճամփան է միշտ փշոտ ու քարքարոտ,
Ամ, մեր սրտերն են Քո սիրուն միշտ կարոտ,
Լքված էինք ու մոլորված աշխարհում,
Բայց մենք գտանք մեր փրկությունն ու մեր տուն:

Թո՛ղ մեր սրտերում բորբոքվի կրակը,
Որ չմարի Քո Սուրբ Հոգու ճրագը,
Գործի՛ր Դու մեր սրտերի մեջ, ո՛վ Հիսուս,
Որ իմանան՝ Դու ես մեր Տերը և Հույս:

2. Կա՞մ աշխարհում, արդյոք, այսքան շատ մեծ սեր,
Կամ հոգատար ու տանջված այսպիսի Տեր,
Չեմ մոռանա Քո վերքերը, ի՛մ Հիսուս,
Կամ էլ խոցված Քո ձեռքերը, ո՛վ իմ Լույս:

3. Խաչի վրա գամեցիր մեր մեղքերը
Ու փշրեցիր մեր քարացած սրտերը,
Օտար էինք, հիմա դարձանք հարազատ,
Չենք վախենում, թեկուզ աշխարհն անի դատ: